




ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

# ԽՆՈՒՍ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ-ՈՒՂԵՑՈՒՅՑ






WESTERN ARMENIA

# KHNUS

## A MAP-GUIDE TO HISTORICAL MONUMENTS








Խնուսցի հայ կանայք Ի դարի սկզբին և Մժնկերտի Սբ. Կարապետ վանքը 1913 թ.
Armenian women from Khnus (early 20th century), and Sourb Karapet Monastery of Mezhenkert (1913)




Տեսարան Խնուս քաղաքից և աղբյուրի գուռեր Խաչալույս (Խալիլչավուշ) գյուղում
View of Khnus City, and fountain troughs in Khachaluys (Khalilchavush) Village

Խնուս գավառի սահմաններն ուրվագծում են շուրջբոլորը ձգվող ջրբաժան լեռնաշղթաները, իսկ ընդհանուր մակերևույթը հիմնականում ներառում է Արածանիի աջակողմյան Խնուս վտակի և նրան օժանդակ Սբ. Դանիելի և Դեղթափի ջրհավաք ավազանը: Արևելք-արևմուտք ուղղությամբ ունի մոտ 75 կմ երկարություն, իսկ հյուսիսից հարավ՝ մինչև 44 կմ լայնություն: Գավառի կենտրոնական մասը մի դաշտավայր է, որի միջով հոսող Խնուս գետը երկու կողմերից ընդունում է բազմաթիվ վտակներ, իսկ արևելյան անկյունն էլ՝ այն միակ դաշտային տեղանքը, որի միջով դուրս գալով՝ Խնուս գետը միախառնվում է Արածանիին:

Խնուսի դաշտը շրջապատող հիմնական լեռներն են հյուսիսում՝ Դեղթափը, հարավում՝ Խամլբերդը, իսկ արևմուտքում՝ Բյուրակնյան լեռները: Համեմատաբար հարթ արևելյան կողմում առանձնանում է Խրըմխայա կոչված հարավ-արևմուտք–հյուսիս-արևելք երկարող բլուրը:

Ինչպես Պատմական Հայաստանի ցանկացած այլ գավառ, Խնուսը նույնպես հարուստ է եղել նյութական մշակույթի հնամենի և բազմազան հուշարձաններով: Դրանց մեծ մասը, սակայն, առհասարակ ոչ միայն գիտականորեն չի ուսումնասիրվել, այլև նույնիսկ չի ցուցակագրվել: Վերջիններիս շարքից ուսումնասիրելով հատկապես ամրոցները՝ եզրակացնում ենք, որ ուշ բրոնզի դարում (մ.թ.ա. ԺԳ-ԺԱ դդ.) տեղի թագավորության մայրաքաղաք է եղել Ղազանչի, իսկ Վանի թագավորության ժամանակաշրջանում (մ.թ.ա. Թ-Զ դդ.) իշխանական կենտրոնը՝ Սլդըզի բերդը:

Ինչ վերաբերում է գավառում գործող քրիստոնեական հոգևոր կենտրոններին, ապա Մեծ եղեռնի նախօրեին հիշվում են գործող մոտ երեք տասնյակ վանքեր և եկեղեցիներ:

Համադրելով հատկապես ՀՃՈՒ հիմնադրամի իրարահաջորդ արշավախմբերի կատարած դաշտային հետազոտությունների արդյունքները, ըստ որի՝ գավառում հաշվառված 37 եկեղեցիներից 33-ը (90%-ը), 6 վանքերից 4-ը (67%-ը), իսկ 43 հայկական գերեզմանոցներից 27-ը (63%-ը) հիմնահատակ ավերվել են, կարող ենք վստահաբար ասել, որ գավառաբնակ հայության բնաջնջումից հետո մեկը մյուսին հաջորդող թուրքական իշխանություններն այստեղ ևս կանխամտածված հաշվեհարդար են տեսել՝ ոչնչացնելով նաև հայկական պատմական հուշարձանների՝ հատկապես քրիստոնեական ժառանգությունը:

Սույն ուղեցույցը հասցեագրում ենք հայրենի հիշատակները կարևորող և համամարդկային վտանգված մշակութային արժեքների պահպանությամբ հետաքրքրված հայ և օտար հանրությանը:

---

Khnus District, the boundaries of which are marked by the surrounding watersheds, mostly covers the catchment area of the Khnus, the right tributary of the river Aratsani, and its side streams, the St. Daniel and the Deghtap. From the east westward, the district is about 75 km long, and from the north southward, it is up to 44 km wide.

The central part of the district is occupied by a plain through which the river Khnus flows with its numerous left and right tributaries. Running out of its eastern corner, the Khnus joins the Aratsani.

The Plain of Khnus is surrounded by Mount Deghtap to the north, Mount Khamelberd to the south, and the Byurakn Range to the west. A hill that is called Kheremkhaya and extends from the south-west to the north-east stands out in the eastern part of the plain, which is comparatively smooth.

Like any other district of Historical Armenia, Khnus once boasted a wide variety of old monuments of material culture, but unfortunately, most of them were never studied scientifically; moreover, no listing of these monuments was ever carried out.

Our studies have led us to the conclusion that in the Late Bronze Age (13th to 11th centuries BC), the fortress of Ghazanchi was the centre of the local kingdom, while during the period of Van Kingdom (9th to 6th centuries BC), the fortress of Seldezi was the centre of the local principality.

As for places of Christian worship, before the Genocide of 1915, about 30 functioning churches and monasteries were mentioned in the diocese of Khnus.

The scientific expeditions carried out in the district by RAA Foundation for several years have revealed the following picture: 33 of the registered 37 churches (90 %), 4 of the 6 monasteries (67 %), and 27 of the 43 Armenian cemeteries (63 %) have been totally annihilated. This fact shows that after the physical extermination of the Armenians of Khnus District, the Turkish authorities that succeeded each other in the course of years deliberately destroyed the historical Armenian monuments, particularly the Christian ones.

This guide book is intended for Armenians and foreigners who are interested in Armenian monuments and concerned about the preservation of universal cultural heritage.

ISBN 978-9939-843-54-4

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION
raa.am, raa-am.org, armenianarchitecture.am, raayer@sci.am

9 789939 843544





Խանըքի ուրարտական բերդը, տապանաքարեր Խուրդիկ (ԺԲ-ԺԳ դդ.) և Հարամիկ (1899 թ.) գյուղերում
An Urartian fortress in Khanek Village; tombstones in Khurdik (12th to 13th c.) and Haramik (1899) Villages




Կարմրակ սրբատեղին Սարլի գյուղի տարածքում և Ղազանչիի ուշբրոնզեդարյան բերդը
A sacred site called Karmrak in Sarli Village, and the Late Bronze Age fortress of Ghazanchi




Զեռնակի բերդը և Գասպարի տան հազարաշեն տանիքը Գասպարգեղում
The fortress of Zernak, and the *hazarashen* ceiling in Gaspar’s house in Gaspargegh Village




Դ-Ե դարերի ճարտարապետական բեկոր Արոս գյուղում և նշանագրեր Խըրթ գյուղի տարածքում
An architectural fragment of the 4th to 5th centuries in Aros Village, and rock-cut symbols in Khert Village

# ԽՆՈՒՍ. ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

